

Ա Մ Փ Ո Փ Ա Չ Ի Ր
ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ
Ց-ԲԴ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԵՎ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄՐՅՈՒՅԹԻ
ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Անցկացման ժամկետը

Օլիմպիադան և նրա շրջանակներում անցկացվող Հայոց եկեղեցու պատմության մրցույթն (այնուհետև տեքստում պարզապես՝ Օլիմպիադա) անցկացվելու են 2017թ. օգոստոսի 4-10-ը: Բոլոր պատվիրակները պետք է հավաքվեն օգոստոսի 2-ին Հայաստանի Հանրապետության հրապարակում: Ժամը կհայտնենք լրացուցիչ:

Օլիմպիադայի մասնակիցները

Օլիմպիադային կարող են մասնակցել Հայաստանի, Արցախի և Սփյուռքի հայերեն ուսուցմամբ վարժարանների և կրթօջախների /այդ թվում՝ մեկօրյա/ 14-18 տարեկան սաները, որոնք անհրաժեշտ իմացություն ունեն:

Օլիմպիադային մասնակցելու համար դիմելու կարգը

Սփյուռքի մասնակիցների ընտրությունն իրականացվում է սփյուռքի համապատասխան կառույցների կողմից (կրթօջախ, համայնք, հովանավորող կազմակերպություն, համատեղ հանձնաժողով):

Օլիմպիադային դիմելու համար անհրաժեշտ է լրացնել մասնակցության հայտը և այն փոխանցել ՀՀ կրթության և գիտության նախարարություն spyurq@yahoo.com էլեկտրոնային հասցեով՝ մինչև 2017թ. **հուլիսի 2-ը** ներառյալ: Իսկ մինչև հուլիսի 27-ը անհրաժեշտ է տալ վերջնական հաստատում՝ պատվիրակության կազմի և թվաքանակի վերաբերյալ:

Մասնակցության հայտերը պետք է լրացնեն պատվիրակությունների /խմբերի/ ղեկավարները: Ցանկալի է օլիմպիադայի մասնակիցների միացյալ պատվիրակություն /խումբ/ ձևավորել ըստ երկրի կամ բնակավայրի՝ առավել բանիմաց թեկնածուների ընտրության և ներկայացուցիչներ ուղարկելու խնդիրը կարգավորելու համար: Բացի պատվիրակության /խմբի/ ղեկավարից՝ պատվիրակությունը պետք է ունենա մասնակիցների թվակազմի համեմատ ուղեկից/ներ/, մինչև 10 պատանու համար 1 ուղեկցող:

Հայաստանի մասնակիցների ընտրությունն իրականացվում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:

Մասնակցելու համար հայտերը կարող են ներկայացվել դպրոցի տնօրինության կամ անձամբ՝ աշակերտի կողմից: Մասնակցության հայտերը պետք է լրացվեն և փոխանցվեն hamahaykakan.olimpiada@gmail.com էլեկտրոնային հասցեով՝ մինչև 2017 թվականի **մայիսի 21-ը**: Մասնակիցների ընտրությունը առաջին փուլում կատարվելու է ներկայացված հայտերի հիման վրա և այնուհետև Skype-ով՝ անձնական զրույցից հետո: Նախնական ընտրության մասին աշակերտները կտեղեկացվեն մինչև հունիսի 10-ը: Մասնակցության վերջնական հաստատումները դիմորդները կստանան մինչև հունիսի 26-ը ներառյալ:

Արցախի պատվիրակությունը ձևավորվում է ԼՂՀ-ի կրթության և գիտության նախարարության կողմից:

Հայտերն ստանալուց և մասնակիցների թիվը ամփոփելուց հետո ՀՀ կրթության և գիտության նախարարությանը իրավունք է վերապահված, բանակցային հիմքի վրա,

յուրաքանչյուր դիմած պատվիրակության համար լրացուցիչ սահմանել հնարավոր առավելագույն թվակազմը:

Լրացուցիչ հարցերով կարելի է դիմել.

հեռ. +374 10 58-13-91

ֆաքս. +374 10 52-73-43

Էլ.փոստ. spyurq@yahoo.com,

info@edu.am

Օլիմպիադայի ոլորտները

Օլիմպիադան ընդգրկում է հարցեր հայ գրականությունից, հայոց պատմությունից և հայ մշակույթի պատմությունից, ինչպես նաև հայոց լեզվով (արևելահայերեն կամ արևմտահայերեն) գրավոր շարադրելու կարողություն: Մասնակիցները պետք է կարողանան դրսևորել գիտելիքներ բոլոր ոլորտներում: Օլիմպիադայի աշխատանքային լեզուն հայերեն է: Օլիմպիադային չեն կարող մասնակցել հայերենին չտիրապետող պատանիներ: Թեպետ գրավոր հարցարանը կարող է տրամադրվել մասնակցին նրա համար նախընտրելի լեզվով:

Հայոց եկեղեցու պատմության մրցույթն անցկացվելու է առանձին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի հովանավորությամբ և աջակցությամբ:

Յուրաքանչյուր մասնակից կարող է մասնակցել կա՛մ միայն օլիմպիադային, կա՛մ երկու միջոցառմանը միաժամանակ: Միայն օլիմպիադային մասնակցողների համար Հայոց եկեղեցու պատմության հարցաշարի իմացությունը պարտադիր չէ:

Օլիմպիադայի անցկացման կարգը

Հայագիտական օլիմպիադան անցկացվում է երկու փուլով՝ գրավոր և բանավոր:

Առաջին՝ գրավոր փուլին մասնակցում են բոլոր պատանիները: Մասնակիցներին տրվելու են առանձնաբար երկու տեսակի առաջադրանքներ՝ հայ գրականությունից և միասնաբար հայոց պատմությունից և մշակույթի պատմությունից:

Հայ գրականության գրավոր փուլում ամենօրյա, այդ թվում՝ Հայաստանի և Արցախի դպրոցների սաներին առաջադրվելու են պարտադիր ընթերցանության համար ցանկում ներառված (տե՛ս «Հայ գրականության պարտադիր ընթերցանության ցանկ») 5 ստեղծագործությունների վերնագրեր: Մասնակիցն ընտրելու է դրանցից մեկը և շարադրելու իր կարծիքը, տպավորությունն այդ ստեղծագործությունից, վերլուծությունը 2 էջի սահմաններում: Նույն պահանջի դեպքում գնահատման չափանիշները, սակայն, սփյուռքի և Հայաստանի ու Արցախի դպրոցների սաների համար տարբեր են լինելու:

Հայ գրականության գրավոր փուլում մեկօրյա դպրոցների սաներին առաջադրվելու է նախապես առաջադրված թեմաներից (տե՛ս «Թեմաների ցանկ») երեք թեմա, որոնցից մեկի մասին մասնակիցը գրելու է մոտավորապես 1 էջ:

Հայոց պատմության և մշակույթի հարցարանը (թեստը) տարբերակված է լինելու Հայաստանի ու Արցախի, սփյուռքի ամենօրյա և սփյուռքի մեկօրյա դպրոցների սաների համար, կազմվելու է նախապես առաջադրված հարցաշարի (տե՛ս «Հայոց պատմության և հայ մշակույթի պատմության հարցաշար») հիման վրա՝ տրված հարցերի բառացի կամ մասնակիորեն վերաձևակերպված հարցադրումներով:

Երկրորդ՝ բանավոր փուլին մասնակցելու են երկու գրավոր առաջադրանքներից առավելագույն միավորներ վաստակած մասնակիցները: Հաշվի առնելով առանձին երկրների և կրթօջախների առանձնահատկությունները և ներկայացված մասնակիցների ընդհանուր թիվը՝ հնարավոր են բացառություններ պատվիրակության ղեկավարի առաջարկով և մասնագիտական հանձնաժողովների որոշմամբ:

Հայ գրականության բանավոր փուլում ամենօրյա դպրոցների (ներառյալ Հայաստանի ու Արցախի) սաները պետք է ներկայացնեն պարտադիր ընթերցանության ցանկում (տե՛ս «Հայ գրականության պարտադիր ընթերցանության ցանկ») ընդգրկված և հարցատմում նշված երկու ստեղծագործություններ: Դրա համար մասնակիցը հարցատմում է վերցնելու, պատրաստվելու է մոտավորապես 15 րոպե (ժողովում է մտքերը, կառուցում է խոսքը. կարող է գրառումներ անել) և հանդես է գալու ամբիոնից՝ բոլոր մասնակիցների ներկայությամբ: Միջուռքի և Հայաստանի ու Արցախի դպրոցների սաների համար գնահատման չափանիշները այս անգամ ևս տարբեր են լինելու:

Հայ գրականության բանավոր փուլում մեկօրյա դպրոցների սաներն իրենց ընտրությամբ ներկայացնելու են ցանկում ներառված երկու ստեղծագործություն:

Անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի անդամները կարող են տվյալ հեղինակի և ստեղծագործության շրջանակներում լրացուցիչ հարցեր ուղղել մասնակցներին:

Հայոց պատմության և մշակույթի բանավոր փուլը անցկացվելու է Brain ring-ի սկզբունքով՝ բանավոր հարցերի և կարճ պատասխանների միջոցով, որոնք ուղղվելու են հանձնաժողովի անդամի կողմից և որոնց թիվը տարբեր է լինելու ամենօրյա և մեկօրյա դպրոցների պարագայում: Մի քանի մասնակիցներ միաժամանակ կանգնելու են ամբիոնում և բոլորը միաժամանակ պատասխանելու են նույն հարցին: Ճիշտ պատասխանների հանրագումարով որոշվելու է երկրորդ փուլի հաղթող(ներ)ը:

Հայոց պատմության և մշակույթի պատմության բանավոր փուլի հարցադրումները սփյուռքի ներկայացուցիչների համար կազմվելու են նույն կից ներկայացվող հարցաշարից (տե՛ս «Հայոց պատմության և հայ մշակույթի պատմության հարցաշար»):

Մշակույթի պատմությանը վերաբերող հարցերի դեպքում՝ հնարավոր է դրանց առարկա հանդիսացող օբյեկտների վիզուալիզացիան:

Հայոց եկեղեցու պատմության մրցույթն անցկացվելու է միայն բանավոր: Հայոց եկեղեցու պատմության հարցաշարը կազմված է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի կողմից՝ ՀՀ հանրակրթական դպրոցներում կիրառվող «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի դասագրքերի հիման վրա: Բոլոր դասագրքերի էլեկտրոնային տարբերակները կարելի է գտնել <http://lib.armedu.am> կայքում:

Օլիմպիադայի նախասիրական մրցույթները

Բացի հիմնական մրցույթներից միջոցառման շրջանակներում լրացուցիչ նախատեսվում են հայկական երգի, ասմունքի մրցույթներ և վիկտորինա, որոնց սփյուռքի մասնակիցները կարող են մասնակցել ըստ ցանկության: Հայաստանի և Արցախի մասնակիցների համար առնվազն մեկ նախասիրական մրցույթին մասնակցելը պարտադիր է:

Օլիմպիադայի մրցանակային տեղերը

Հայագիտական օլիմպիադայի հիմնական հաղթողները հայտարարվում են երկրորդ փուլի արդյունքների հիման վրա: Հիմնական հաղթողների համար նախատեսված են.

I կարգ՝ 2 հատ

II կարգ՝ 4 հատ

III կարգ՝ 6 հատ դիպլոմներ և մրցանակներ:

Նախասիրական մրցույթների հաղթողները ստանալու են պատվոգրեր և մրցանակներ:

Հայոց եկեղեցու պատմության մրցույթում հաղթողների համար նախատեսված են

I կարգ՝ 2 հատ

II կարգ՝ 4 հատ

III կարգ՝ 6 հատ դիպլոմներ և մրցանակներ, որոնք տրվելու են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից:

Օլիմպիադայի ֆինանսավորումը

Օլիմպիադայի ընթացքում մասնակիցների, ղեկավարների և ուղեկցողների կեցության, սննդի և շրջագայության ծախսերն ստանձնում է Հայաստանի Հանրապետությունը: Աջակից՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Ճանապարհածախսը հոգում են մասնակիցները կամ համապատասխան կազմակերպությունները, կրթօջախները, բարերարները: